

ՍՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՍՈՒՆ ՏԱՐՈՒՄ

Բանասիր. գիտ. դոկտոր Գ. Կ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Սովետական Միության բառարանագրությունը իր բազմապիսի, բազմալեզու և բազմաբնույթ բառարաններով առաջնային տեղ է գրավում բառարանագրության ընդհանուր պատմության մեջ: Հրատարակվել են արմատական-ստուգաբանական, պատմական, բացատրական, ուղղագրական, թարգմանական, հոմանիշների, դարձվածաբանական, օտար բառերի, հեղինակային, անձնանունների, տեղանվանական, հապավված բառերի, տերմինաբանական և այլ բառարաններ:

Սովետական Միության մի շարք ժողովուրդներ միայն մեր օրերում ունեցան իրենց գրավոր լեզուն, ազգային գիրն ու գրականությունը և առաջին բառարանը: Առաջին անգամ հրատարակվեցին ռուսերենին առնչված էրդյաներեն, մոկշայերեն, բուրյաթ-մոնղոլերեն, թուվիներեն, խակասերեն, նենեցերեն, մանսիերեն, էվենկերեն, ագուլերեն, զիրյաներեն, թաթերեն, յաղնոբերեն, նանայերեն, նոգայերեն, սելկուպերեն, ուլդուրերեն, լամութերեն, բուդուխերեն, խինալուդերեն, կրիզերեն և ուրիշ լեզուների բառարաններ:

Ծտպատերազմյան շրջանում հատուկ զարկ ստացավ հարավասիական և աֆրիկյան, գաղութային լծից ազատագրված ժողովուրդների լեզուներին առնչված սովետական բառարանագրությունը: Ռուսերենին առնչված երկլեզվյան բառարաններ հրատարակվեցին չինարեն, հինգի, ուրդու, մարատհի, հուջարաթի, վիետնամերեն, մալայերեն, սիամերեն, բիրմաերեն, տիբեթերեն, թամիլերեն, ամհարերեն, փենջաբերեն, սվահիլի, զուլու և այլ լեզուներով:

1950 թ. լեզվաբանական հարցերի շուրջը հայտնի բանավեճից հետո սովետական բառարանագրությունը թեկնոսեց իր զարգացման մի նոր, նշանակալի փուլը: Բառարանագրությունը ճանաչվեց որպես բանասիրության մի ուրույն և կարևոր բնագավառ:

1952 թ. հրատարակվող «Вопросы языкознания» երկամսյա հանդեսը հատուկ տեղ է հատկացնում բառարանագրական աշխատանքներին, իսկ «Лексикографический сборник» տարեգիրքը ծառայում է միայն այդ նպատակին:

Հիսնական թվականներից ՍՍՀՄ ԳԱ ասպիրանտուրայի գծով պատրաստվեցին բառարանագիր մասնագետներ: Գիտական ուսումնասիրությունների նյութ դարձան նախահեղափոխական և հետագա շրջանների բառարաններն ու նշանավոր բառարանագիրների կյանքն ու գործունեությունը:

ՌՍՖՍՀ կազմավորման առաջին իսկ օրերից գիր չունեցող ժողովուրդներին հնարավորություն տրվեց ստեղծելու ազգային գրավոր լեզու, վերացնելու երկրում տիրող անգրագիտությունը:

Ռուսաց լեզվի ուսուցումն ու տարածումը ապահովելու համար անհրաժեշտ էին երկլեզվյան բառարաններ:

Հիսնամյա ժամանակաշրջանում կազմվել են 3000-ից ավելի ուսերեն-ազգային և ազգային-ուսերեն բառարաններ՝ առնչված շուրջ 150 լեզվի հետ:

Ռուս-ազգային բառարանների վրա որպես հեղինակներ, խմբագիրներ կամ ղեկավարներ աշխատել են սովետական անվանի շատ լեզվաբաններ՝ Վ. Բ. Աբաև (օսեթերեն, իրոներեն, դիգորերեն), Գ. Դ. Սանժեն (մոնղոլերեն, մանջուրերեն, դարխաթերեն), Ն. Ա. Բասկակով (նոգայերեն, թուրքմեններեն, կարակալպակերեն, օյրոթերեն, ուլդուրերեն, խակասերեն) և շատ ուրիշներ:

Լեզվական բառարանների մեջ գիտական և գործնական մեծ նշանակություն ունեն նորմատիվ բառարանները: Այգուլիսիները իրենց բառահոգվածների նյութ են դարձնում ժամանակի ընդհանուր գրական լեզվի բառապաշարը և սահմանագծում բառի լեզվաբանական և իմաստաբանական օգտագործման սահմանները:

Ռուսաց լեզվի բացատրական նոր բառարան ունենալու խնդիրը քսանական թվականներին դրված էր առաջին պլանի վրա:

Վ. Ի. Լենինի իղձը՝ ունենալ ժամանակակից ռուսաց լեզվի բառարան, որն ընդգրկեր Պուշկինից մինչև Գորկին, իրականացավ նրա մահից հետո: Դ. Ուշակովի գլխավորությամբ կազմված ռուսաց լեզվի բառահատոր բացատրական բառարանը, որ այդ իղձի իրականացումն էր, հիմք հանդիսացավ հետագա շրջանի ուս և այլ ժողովուրդների թե՛ բացատրական, և թե՛ երկլեզվյան թարգմանական բառարաններ կազմելու համար:

Երեսնական թվականներին լայն ընդունելություն գտած ուշակովյան բառարանից հետո չափազանց հաջողված աշխատություններ են Ս. Ի. Օժեգովի ռուսաց լեզվի մեկհատորյակը, որը կարճ ժամանակում ունեցավ մի քանի հրատարակություն, ՍՍՀՄ ԳԱ հրատարակած բառահատորյակը և Լենինյան մրցանակի արժանացած 17 հատորանոց բառարանները: Բազմահատոր բառարանի վրա որպես գլխավոր խմբագիրներ աշխատել են Վ. Ի. Չերնիշևը, Ս. Պ. Օբնորսկին, Վ. Վ. Վինոգրադովը, Ս. Գ. Բարխուդարովը, Վ. Մ. Ժիրմունսկին, Ա. Մ. Բաբկինը, Ֆ. Պ. Ֆիլինը և ուրիշներ: Վերահրատարակվել են նաև Վ. Ի. Դալի ռուսաց լեզվի բառահատոր բառարանը, Սրեդնեվսկու բառարանագրական աշխատությունը, գիտական տարբեր բնագավառներ ընդգրկող տերմինաբանական բառարաններ: Դրանց մեջ ուշադրության արժանի են 1934—1956 թթ. տեխնիկական տերմինաբանության հանձնաժողովի հրատարակած 67 բյուլետենները:

Հրատարակվել են մի շարք բարբառային բառարաններ, ինչպես՝ Օսովեցկովի «Словарь современного русского народного говора д. Деулино Рязанской области (1969 թ.)», Վ. Ա. Սենկևիչի «Терминология охоты Обь-Енисейского междуречья», «Словарь Орехово-Зуевских текстильщиков» և այլն: Ֆ. Պ. Ֆիլինը հրատարակում է ռուս լեզվի ժողովրդական խոսվածքների բազմահատոր բառարանը:

Մինչ հեղափոխությունը հայտնի էին Ա. Պրեոբրաժենսկու ոչ լրիվ հրատարակված և Գորյակի (ավելի փոքր) դպրոցական բնույթի ստուգաբանական բառարանները: Սովետական շրջանում ոչ միայն լրիվ հրատարակվեց Ա. Պրեոբրաժենսկու բառարանը, այլև կազմվեցին նոր աշխատություններ՝ Ն. Շանսկու «Ռուս լեզվի համառոտ ստուգաբանական բառարանը», Մաքս Ֆասլերի ավելի ընդարձակ ու ժամանակակից գիտության պահանջները բավարարող բառարանը և այլն:

Ռուսաց լեզուն ուղղագրական մեծ բարեփոխության էր ենթարկվել, հետևապես պահանջ էր դրացվում ուղղագրական բառարանների: Այդ բնագավառում երկար ժամանակ պատվավոր գեր են կատարել Վ. Ֆլերովի, հետագայում Ի. Ուստինովի, Ի. Շապոռնիկովի կազմած բառարանները (ուղղագրական նոր օրենքների բացատրությամբ), որոնք մինչև երեսնական թվականները ունեցել են տասնյակից ավելի հրատարակություններ: 1934 թ. կյանք մտավ Դ. Ուշակովի կազմած ուղղագրական բառարանը, որը երեսուն տարի անընդհատ պահպանեց իր արժեքը և ունեցավ քսանից ավելի հրատարակություն: 1956 թ. Ս. Օժեգովի և Ա. Շապիրովի խմբագրությամբ լույս տեսավ ընդարձակ բառարան (110 000 բառ), որը միևնույն ժամանակ ունի ուղղախոսական արժեք:

Քննարկվող ժամանակաշրջանում ռուսաց լեզուն հարստացել է նաև դարձվածաբանական, Ա. Մ. Բաբկինի և Վ. Վ. Շենդեցովի «Օտարադգի և օտարագիր բառերի ու արտահայտությունների», օտար բառերի և թևավոր ասույթների բառարաններով: Հրատարակվել են տարբեր բնույթի հոմանիշների բառարաններ, որոնցից հատկապես արժեքավոր է Զ. Ե. Ալեքսանդրովայի բառարանը՝ 9000 հոմանիշային բառահոգվածով (1968 թ.):

Նախասովետական Ռուսաստանում ուկրաիներենը չի համարվել սլավոնական առանձին լեզու, մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը Ուկրաինայում չի գործել մայրենի լեզվով դասավանդվող ոչ մի պետական դպրոց: Բնական է, որ նման պայմաններում չէր կարող զարգանալ ազգային լեզվական մշակույթը, այդ թվում և բառարանագրությունը:

Ուկրաինայում սովետական կարգեր հաստատվելը միանգամայն փոխեց վիճակը: Ազգային դպրոցների լայն ցանցի ստեղծումը, գիտության և մշակույթի բուռն զարգացումը պահանջում էին ունենալ ուղղագրական բառարաններ: 1922—1926 թթ. լույս տեսան Դ. Կ. Գոլոսկեիչի ուկրաիներեն լեզվի ուղղագրական բառարանի երեք նոր հրատարակությունները: Դրանց հաջորդեցին մի քանի փոքր ու մեծ բառարաններ՝ ուղղագրական կանոնների բացատրությամբ, դրանց մեջ արժեքավորն ու երկարակյացը Ի. Մ. Կիրիչենկոյի բառարանն է (1949 թ.), որը 1955 թ. վերահրատարակվեց ավելի մեծ բառապաշարով:

Ուղղագրական բառարաններին զուգընթաց հիշատակման արժանի է Մ. Դ. Պոգրիբնիի ուկրաիներեն գրական լեզվի ուղղախոսական բառարանը շուրջ 50000 բառահոգվածով: Դրական լեզվի ուղղախոսական բառարանները կարևոր են հատկապես այն լեզուների համար, ուր շեշտը որոշակի ու կայուն չէ:

Ուկրաինական գրական լեզվի համար կարևոր աշխատանք է Բ. Դ. Գրիչենկոյի բառահատոր բառարանի լուսատիպ վերահրատարակությունը (1958—1959 թթ.): Առաջին հրատարակությունը եղել է 1907—1909 թթ.:

Հրատարակված բառարանների մեջ արժեքավոր են երկլեզվյան, առանձնապես ռուսաց լեզվին առնչված բառարանները: Դրանց շարքում ընդարձակ և արժեքավոր աշխատություններ են Ուկրաինական ՍՍՀ ԳԱ Ա. Ա. Պոտեբնյայի անվան լեզվաբանության ինստիտուտի 1953—1963 թթ. հրատարակած ուկրաիներեն-ռուսերեն վեցհատորյա բառարանը և Մ. Յա. Կալինովիչի ղեկավար խմբագրությամբ հրատարակված ռուս-ուկրաիներեն բառարանը՝ 80000 բառահոգվածով, որը լրացումներով և ուղղումներով վերահրատարակվել է մի քանի անգամ:

Թարգմանական բառարաններ են կազմվել առնչված անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, լեհերեն, հին սլավոներեն լեզուներին:

Ուկրաինայում մեծ աշխատանքներ են տարվել բարբառների ուսումնասիրման ուղղությամբ: Հրատարակվել են աշխատություններ բառարանային բաժիններով և առանձին գործեր, ինչպես՝ Օգեսայի մարդի, անգրկարպատյան բարբառի, Պոլտավայի խոսվածքի բառարանները:

Հրատարակվել են նաև դարձվածաբանական, օտար բառերի, հոմանիշների, հեղինակային, հատուկ անունների, տեղագրական բառարաններ, ինչպես և վերահրատարակվել են Պ. Բերինդի բառարանը (առաջին հրատ. 1627 թ.), Ե. Տիմչենկոյի խմբագրած «Ուկրաինական լեզվի պատմական բառարանի» երկհատորյակը:

Սովետական ուկրաինական բառարանագրությունը հարուստ է տերմինաբանական բառարաններով (հիմնականում՝ ռուս-ուկրաիներեն), կապված գիտության, տեխնիկայի ու մշակույթի տարբեր բնագավառների հետ:

Նախասովետական շրջանում բելոռուսական լեզուն ևս ուկրաիներենի բախտն է ունեցել. այն համարվել է ռուսաց լեզվի մի բարբառը:

Բելոռուսական բառարանագրությունը իր իսկական ծնունդն ու զարգացումն է ապրում սովետական կարգերում: Հիսնամյակի ընթացքում հրատարակվել են ուղղագրական, բարբառային, որոշ խոսվածքների ընդարձակ բառարաններ, մեծ մասամբ բարբառ-ռուսերեն բաժնով:

Երկլեզվյան բառարանների շարքում արժեքավոր են Յա. Կոլասի, Վ. Կրապիվայի և Պ. Գլեբկիի խմբագրությամբ հրատարակված ռուս-բելոռուսերեն (86000 բառահոդված) և Կ. Կրապիվայի խմբագրությամբ 1962 թ. հրատարակված բելոռուսերեն-ռուսերեն (90000 բառահոդված) բառարանները. որոնք հրատարակել է ԲՍՍՀ ԳԱ լեզվաբանության ինստիտուտը: Երկլեզվյան բառարաններից հարկ է նշել Ս. Պլավնիկի, Ն. Ռուբինշտեյնի և Ի. Գարբացեվիչի հրեերեն-բելոռուսերեն բառարանը (բելոռուսերեն լեզվով, հրեերենի համառոտ քերականական տեղեկություններով):

Տերմինաբանական բառարաններից արժեքավոր է բելոռուսական գիտական տերմինաբանության շարքը (1922—1924 թթ., 24 պրակ), որն ընդգրկում է գիտության տարբեր բնագավառների տերմիններ:

Ուկրաիներենի և բելոռուսերենի նման մոլդավերենը ևս նախահոկտեմբերյան շրջանում ինքնուրույն լեզու չէր համարվում:

1924 թ. Ուկրաինայի կազմում ստեղծվեց Մոլդավիայի Ինքնավար Սովետական Սոցիալիստական Հանրապետություն, որը 1940 թ. վերակազմվեց սովետական սոցիալիստական հանրապետության:

Հրատարակվել են ռուս-մոլդավերեն բառարան 61000 բառահոդվածով (1954 թ.) և մոլդավ-ռուսերեն բառարան՝ 40000 բառահոդվածով (1961 թ.), ինչպես նաև ուղղագրական և դպրոցական բառարաններ, տերմինաբանական բառարաններ (բժշկական, մաթեմատիկական, բնագիտական, սպորտային): Մոլդավական բառարանագրության մեջ իրենց արժեքավոր ներդրումն ունեն Ն. Գ. Կորլետյանին, Ա. Տ. Բորչչը, Վ. Պ. Սոլովյովը և ուրիշներ:

Նախասովետական շրջանում էստոնիայի, կատվիայի և լիտվայի ժողովուրդների բառարանագրությունը կապված է եղել հիմնականում գերմանական և լեհական լեզուների հետ: Սովետական Միության կազմի մեջ ընդգրկվելուց հետո այդ հանրապետությունների բառարանագրությունը նոր շրջան

թևակոխեց, կապվեց ռուսաց լեզվի՝ որպես միութենական պետական լեզվի հետ:

Բառարանային լավագույն աշխատանքները կազմվեցին ետպատերազմյան շրջանում: Հանրապետություններում կազմակերպվեցին գիտությունների ակադեմիաներ՝ լեզվի և գրականության ինստիտուտներով:

Լատվիայում ռուսերենին առնչված հրատարակվել են ընդհանուր բնույթի թե՛ դպրոցական-ուսուցողական, և թե՛ ավելի ծավալուն բառարաններ, որոնց մեջ արժեքավոր գործեր են է. Օղոլինի և է. Ա. Օղոլինայի ռուս-լատիշերեն բառարանը՝ 42000 և լեզվի ինստիտուտի կոլեկտիվ ուժերով կազմված ռուս-լատիշերեն երկհատոր բառարանը՝ 84000 բառահոգով: Լատիշերեն-ռուսերեն բառարաններ են կազմել Յա. Վ. Լոյան, Ա. Ե. Գուտմանը, Օ. Ա. Լեգինովան և ուրիշներ: Հրատարակվել են նաև տերմինաբանական բազմաբնույթ բառարաններ: Այդ բնագավառում առանձնապես նշելի են ԳԱ Լատիշերեն լեզվի տերմինաբանական հանձնաժողովի հրատարակած տեղեկագրերը (1949—1957 թթ., հրատարակվել է 23 պրակ):

Ուշադրության արժանի է ուղղագրական և ուղղախոսական բառարանների շարքը, որտեղ ներկայացված է օտար բառերի գործածությունը Լատիշերենում՝ կապված էստոներեն, չեխերեն, սլովակերեն, գերմաներեն, լիտվերեն, լեհերեն, անգլերեն, իսպաներեն, ֆրանսերեն, ֆիններեն լեզուներին: Այդ բառարանները 1960 թ. սկսած հրատարակում է լեզվի և գրականության ինստիտուտը:

Լատիշական բառարանագրության մեջ մեծ երախտիք ունի Յա. Էնձելին, որը հեղինակ է Լատվիական ՍՍՀ տեղանունների ընդարձակ բառարանի, լրացումներ ու ձշտումներ է կատարել Կ. Մյուլենբախի կազմած Լատիշերեն լեզվի սլատմա-ստուգաբանական բառարանում (1946 թ.) և խմբագրել ու ղեկավարել է բառարանագրական շատ աշխատություններ: Լատիշական բառարանագրության մեջ իր նշանակալի լուծման ունի նաև Յա. Լոյան:

Լիտվական բառարանագրության ասպարեզում սովետական շրջանում հրատարակվել են Խ. Լեմխենասի ռուս-լիտվերեն, Ա. Լիբերիսի լիտվերեն-ռուսերեն և ուրիշ բառարաններ՝ կապված լեհերեն, գերմաներեն, անգլերեն, ֆրանսերեն, էսպերանտո, լատիներեն, բելոռուսերեն լեզուներին: Տերմինաբանական բառարանները հիմնականում ռուս-լիտվերեն են և լիտվերեն-ռուսերեն:

Լիտվական բառարանագրության ամենախոշոր աշխատանքը պետք է համարել Լիտվական ՍՍՀ ԳԱ լեզվի և գրականության ինստիտուտի հրատարակած լիտվերենի բազմահատոր բացատրական բառարանը, որի վրա որպես կազմողներ և խմբագիրներ աշխատել է լեզվաբանների մի ամբողջ խումբ: Հատկապես նշելի է Ա. Լիբերիսի և Ի. Կրուտայասի աշխատանքը:

էստոնիական ՍՍՀՄ կազմի մեջ ընդունվելուց հետո էստոն լեզվաբանները կազմեցին մի շարք բառարաններ, որոնց մեջ արժեքավոր են Ի. Տամմի էստոներեն-ռուսերեն բառարանը, որն ունեցել է մի քանի հրատարակություններ և Վ. Մուխելի ռուս-էստոներեն բառարանը, որը նույնպես լրացումներով վերահրատարակվել է: Ուղղագրական բառարաններից արժեքավոր է և արժանացել է մի քանի վերահրատարակության է. Մուուկի բառարանը, որը դեռևս նախասովետական շրջանում ունեցել է 7 հրատարակություն:

Տերմինաբանության գծով հրատարակվել են երկու տասնյակից ավելի ուսու-էստոներեն բառարաններ տարբեր մասնագիտությունների գծով և գերմաներեն-անգլերեն-չվեդերեն-ֆիններեն-էստոներեն-ռուսերեն ճահճագիտական բառարանը (1960 թ.):

Բառարանագրության վիճակը այլ պատկեր ունի միջինասիական հանրապետություններում: Սովետական Միության կառավարության լուսավորական հիմնարկների առաջին աշխատանքները այդ հանրապետություններում տարվում էին գրավոր լեզու ստեղծելու, մասսայական անգրագիտությունը վերացնելու, գիր ու գրականություն ստեղծելու ուղղությամբ: Միջինասիական ժողովուրդների լեզուներից միայն ուղբեկերենը նախասովետական շրջանում ուներ ռուսերենին առնչված առանձին բառարան:

Սովետական կարգերում միջինասիական ժողովուրդները հնարավորություն ստացան ունենալու իրենց մայրենի գրավոր լեզուն և գիտության, մշակույթի բոլոր բնագավառներում՝ իրենց ազգային որակյալ կադրերը:

Նոր գիր ստեղծող, ինչպես և գիր ունեցող միջինասիական ժողովուրդները 1940 թ. հրաժարվելով 1928 թ. ընդունած լատինական այբուբենից, ընդունեցին ռուսական այբուբենը, որը ոչ միայն ավելի ճիշտ է արտահայտում այդ լեզուների հնչյունական հարստությունը, այլև դյուրին է դարձնում դրանց ուսուցումը:

Կարձ ժամանակում միջինասիական հանրապետություններում ստեղծվեց դպրոցական խիտ ցանց, բացվեցին բարձրագույն ուսումնական բազմաթիվ հաստատություններ, գիտությունների ակադեմիա՝ բազմաբնույթ գիտահետազոտական ինստիտուտներով:

Միջինասիական հանրապետություններում առաջին հերթին կազմվեցին և հրատարակվեցին փոքր ու ընդարձակ ուղղագրական բառարաններ՝ տվյալ լեզվի ուղղագրական կանոնների բացատրությամբ: Ինչդ գործում իրենց արժեքավոր լուծան են ներդրել Ս. Իբրահիմովը, Մ. Ռահմանովը և ուրիշներ (ուղբեկերեն լեզվի), Մ. Բալակաևը, Գ. Ջարկեշևան (ղաղախերեն լեզվի), Մ. Բոգդանովան, Խ. Կարասաևը (կիրգիզերեն լեզվի), Պ. Աղիմովը, Ջ. Ամանսարիևը (թուրքմեներեն լեզվի), Յա. Քալոնթարովը (տաջիկերեն լեզվի), Ս. Կենիսբաևը, Ի. Բաթմանովը, Ն. Բասկակովը և ուրիշ այլ փորձառու բառարանագիր-լեզվաբաններ:

Բառարանագրական առավել ծավալուն աշխատանքներ են կատարվել Ուղբեկական Հանրապետությունում:

Ուղբեկստանի բառարանագիրները, լեզվի ուղղագրական բառարաններ կազմելուն զուգընթաց, հրատարակեցին երկլեզվյան տերմինաբանական, հիմնականում գյուղատնտեսական և բնագիտական բնույթի բառարաններ (Ս. Սահբիդինով, Ս. Իբրահիմով): Տերմինաբանության բնագավառում լավագույն աշխատանք է 1931—1935 թթ. տերմինաբանական հանձնաժողովի թողարկած գյուղատնտեսական ուսու-ուղբեկերեն բառարանի շորս պրակը: Հրատարակվել են նաև մի շարք երկլեզվյան թարգմանական բառարաններ: Ռուսերեն-ուղբեկերեն լույս են տեսել երկու տասնյակից ավելի բառարաններ, որոնց մեջ արժեքավոր է Մ. Այբեկի և Ա. Բորովկովի գլխավոր խմբագրությամբ 1950—1955 թթ. լույս ընծայված հինգհատորյա բառարանը, ինչպես նաև Ա. Աղիզովի, Ս. Ակաբերովի, Ֆ. Ալիևի խմբագրությամբ Ռ. Աբդուհամանովի բառարանը, որը պարունակում է 50000 բառահոդված:

Ուղբեկերեն-ռուսերեն բառարաններն ավելի սակավաթիվ են, ամենից ընդարձակն ու հանգամանալիցը Ա. Կ. Բորովկովի խմբագրությամբ լույս ընծայված բառարանն է (կազմողներ՝ Զ. Մ. Մադրուֆով, Ա. Տ. Խոջախանով)։ Ուղբեկական ՍՍՀ ԳԱ Ա. Ս. Պուշկինի անվան լեզվի և դրականության ինստիտուտը 1960 թ. ուղբեկերենի վերածած հրատարակել է Մահմուդ Կաշգարիի (XI դ.) «Իրվան-լուդատ ատ թյուրք» ծավալուն բառարանագրական աշխատությունը։

Ղաղախատանում հիսնամյակի ընթացքում հրատարակվել են ուս-ղաղախերեն թարգմանական մի շարք բառարաններ, որոնց մեջ հարկ է նշել Մ. Բալականի, Ս. Ժինեբաևի, Ս. Կենիսբաևի և Ն. Սաուրանբաևի ընդհանուր խմբագրությամբ 1948 թ. լույս ընծայված ուսերեն-ղաղախերեն երկհատորյա և Ա. Իսակովի, Հ. Մահմուդովի և Գ. Մուսաբաևի 50000 բառահոգված պարունակող բառարանները։ Ղաղախերեն-ռուսերեն բառարանների մեջ արժեքավոր աշխատություն է Հ. Մահմուդովի և Գ. Մուսաբաևի Ղաղախերեն-ռուսերեն բառարանը (1954 թ.)՝ Ղաղախերենի քերականության համառոտ ակնարկով։

1959—1961 թթ. Ղաղախական բառարանագրությունը հարստացավ մայրենի լեզվի բացատրական բառարանով, որը հրատարակել է Ղաղախական ՍՍՀ ԳԱ լեզվաբանության ինստիտուտը։

Հրատարակվել են նաև տերմինաբանական բառարաններ։

Կիրգիզական ՍՍՀ-ում կարճ ժամանակում հրատարակվեցին ուղղագրական, թարգմանական և տերմինաբանական մի շարք բառարաններ։ Կարևոր գործեր են 40000 (1944 թ.) և 51000 (1957 թ.) բառահոգվածներով հրատարակված ուսերեն-կիրգիզերեն բառարանները, հեղինակությամբ Դ. Շյուքրովի, Խ. Կարասաևի և Կ. Յուդախինի։ 1969 թ. է. Աբդուլաևի և Դ. Իսաևի խմբագրությամբ հրատարակվել է կիրգիզական լեզվի բացատրական բառարանը։

Կիրգիզական և ուղբեկական բառարանագրության զարգացման գործում մեծ է թուրքագետ, Կիրգիզական և Ուղբեկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Կոնստանտին Կուզմիշ Յուդախինի ծառայությունը։ Նա իր աշխատություններով նպաստել է այդ լեզուների զարգացմանը և աճեցրել ազգային կադրեր։ Կ. Կ. Յուդախինը հեղինակ է նաև շաղաթայերեն, ույղուրերեն, դունգայերեն բառարանների։

Սովետական շրջանում բառարանագրության ասպարեզում Թուրքմենական ՍՍՀ-ում կատարվել են զգալի աշխատանքներ։ Հրատարակվել են ուղղագրական, երկլեզվյան, տերմինաբանական և բացատրական բառարաններ։

Ուղղագրական բառարաններից ուշադրության արժանի է Պ. Ազիմովի, Զ. Ամանսարիևի, Խ. Բայլիևի և այլոց աշխատությունը (1957 թ.)։ Երկլեզվյան բառարաններից կարևոր աշխատանք են Ն. Բասկակովի և Մ. Համզաևի խմբագրությամբ 50000 բառահոգվածով հրատարակված ուսերեն-թուրքմեններեն (կազմողներ՝ Զ. Մուհամեդովա, Ս. Ալիև և ուրիշներ) և Խ. Բայլիևի ու Բ. Կարիևի թուրքմեններեն-ռուսերեն բառարանները։ Երկլեզվյան տերմինաբանական բառարաններից ավելի ընդարձակ և ուշադրության արժանի են ֆիզիկայի, շինարարական գործի, գյուղատնտեսության տերմինաբանությունը վերաբերող աշխատությունները։

Թուրքմենական ՍՍՀ ԳԱ լեզվաբանության ինստիտուտը Մ. Յա. Համդակի խմբագրությամբ 1962 թ. հրատարակել է թուրքմեններեն լեզվի բացատրական առաջին բառարանը:

1949—1954 թթ. Ե. Բերտելսի գլխավոր խմբագրությամբ հրատարակվել են ռուսերեն-տաջիկերեն (հեղինակներ՝ Ս. Ա. Աբգուլասիև, Կ. Ա. Աբգուլասիև, Մ. Ամինզագեև և ուրիշներ) 45000 բառահոգվածով և տաջիկերեն-ռուսերեն (հեղինակներ՝ Ս. Ջ. Արզումանով, Ն. Ն. Երշով, Յա. Ի. Քալոնթարով և ուրիշներ) 40000 բառահոգվածով բառարանները: 1969 թ. հրատարակվել են տաջիկական լեզվի երկհատոր բառարանը և Մ. Ֆադիլովի «Ժամանակակից տաջիկական լեզվի դարձվածաբանական բառարան» աշխատությունները:

Տերմինաբանական բառարաններից արժեքավոր են Յա. Ի. Քալոնթարովի և Հ. Մ. Մաքսուդովի, ինչպես նաև Ա. Ա. Սեմենովի բառարանները: Տաջիկական բառարանագրության մեջ, ազգային կազմերի հետ միասին, մեծ դեր է կատարել Ե. Է. Բերտելսը:

ՍՍՀՄ կազմավորումից հետո անցած հիսնամյա ժամանակաշրջանում Սովետական Ադրբեջանում հրատարակվել են բազմաթիվ մեծ ու փոքր բառարաններ: Երկլեզվյան բառարաններից կարևոր աշխատություն է Հ. Հուսեյինովի խմբագրությամբ 1940—1946 թթ. հրատարակված ռուսերեն-ադրբեջաներեն քառահատոր բառարանը՝ շուրջ 100000 բառահոգվածով, որը երկու հատորով վերահրատարակվեց 1956—1959 թթ.: Ադրբեջաներեն-ռուսերեն բառարաններից արժեքավոր է Ադրբեջանական ՍՍՀ ԳԱ Նիզամիի անվան լեզվի և գրականության ինստիտուտի հրատարակած բառարանը: Հրատարակվել են նաև բարբառային, ուղղագրական, տերմինաբանական, օտարազգի բառերի և այլ բնույթի բառարաններ: Ադրբեջանական բառարանագրության մեջ մեծ վաստակ ունի Ա. Օրուջևը:

Սովետական շրջանում մեծ նվաճումներ ունի վրաց բառարանագրությունը: Վրացերենը ուներ Սուլխան Սաբա Օրբելիանու վրացերենի բացատրական բառարանը (հրատ. 1884 թ.), որը վերաբերում է XVII—XVIII դդ.: Այդ բառարանը երկու անգամ վերահրատարակվել է՝ 1928 թ. Ի. Ղիպշիձեի և Ա. Շանիձեի, իսկ 1949 թ. Հ. Յորդանիշվիլու խմբագրությամբ:

Վրաց լեզվի զարգացումը թելադրում էր ունենալու բացատրական նոր, ավելի լիակատար բառարան: Վրացական ՍՍՀ գիտությունների ակադեմիան 1950—1965 թթ. հրատարակել է վրացերենի ութհատորյա բացատրական բառարանը (խմբագիրներ՝ Ս. Վաչնաձե, Վ. Կուպրաձե, Գ. Մերեթելի և ուրիշներ՝ Ա. Չիքոբավաջի, Գ. Ախվլեդիանու գլխավոր խմբագրությամբ): Կազմվել են մի շարք երկլեզվյան-թարգմանական բառարաններ (ռուսերեն, արաբերեն, պարսկերեն, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, օսեթերեն, սանսկրիտ, ճաներեն, լատիներեն և այլ լեզուների): Երկլեզվյան բառարանների մի զգալի մասը դպրոցական-ուսուցողական նպատակներ հետապնդող աշխատություններ են: Ռուսերենին առնչված բառարաններից արժեքավոր աշխատություններ են Գ. Ախվլեդիանու, Ս. Վաչնաձեի, Ն. Ղողոբերիձեի և ուրիշների խմբագրությամբ 1956—1959 թթ. հրատարակված ռուս-վրացերեն եռահատոր բառարանը (վրաց լեզվով տրված ռուսերենի քերականության համառոտ ակնարկով) և Կ. Դաթիկաշվիլու վրաց-ռուսերեն երկհատորյակը: Երկլեզվյան բառարաններից հարկ է նշել Պ. Սանակոեի վրացերեն-օսեթերեն, Ա. Չիքոբավաջի ճաներեն-մեգրելերեն-վրացերեն համե-

մատական բառարանը վրացերեն և ռուսերեն առաջաբաններով և Գ. Ախվի-գիանու սանսկրիտերեն-վրացերեն բառարանը, որի սանսկրիտերեն բաժինը տրված է լատինական այբուբենով՝ աշխատությունն ավելի օգտագործելի ու գործնական դարձնելու համար: Վրաց բառարանագրությունը հարստացել է բարբառային բառարաններով, որոնց մեծ մասը կից է բարբառային ուսումնասիրություններին:

Վրաստանի պատմության և նյութական մշակույթի ինստիտուտը հրատարակել է «Վագրենավորի» պատկերավոր բառերի ու արտահայտությունների դարձվածաբանական բառարանը:

Հրատարակվել է նաև ուղղագրական (որի մեջ մեծ վաստակ ունի Վ. Թոփուրիան), դարձվածաբանական, օտարազգի բառերի, հոմանիշների, աշխարհագրական և տերմինաբանական բառարանների մի ամբողջ շարք: Տերմինաբանական բառարանները ռուսերեն-վրացերեն են, սակավ դեպքերում՝ վրացերեն-ռուսերեն:

1941 թ. Վրացական ՍՍՀ ԴԱ լեզվի ինստիտուտը վերահրատարակեց Փարսադան Գորգիջանիձեի XVII դ. կազմած վրացերեն-արաբերեն-պարսկերեն բառարանը, որի հիմքը հանդիսացել է Աբու Նասրա Ֆեռահիի արաբերեն-պարսկերեն բառարանը:

Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին տարիներից սկսվում են հայերեն մասնագիտական-տերմինաբանական բառարաններ կազմելու աշխատանքները: Բառարանագրության աշխատանքներին նվիրվեցին Մ. Աբեղյանը, Ստ. Մալխասյանցը, Հ. Աճառյանը, Թ. Ավդալբեկյանը, Ե. Տեր-Մինասյանը, Ա. Ղարիբյանը, Մ. Գևորգյանը, Պ. Սոտնիկյանը, Վ. Արծրունին, Վ. Փոթեյանը, Լ. Հովհաննիսյանը, Ա. Տոնյանը և ուրիշներ:

1924—1928 թթ. լույս տեսան ռուս-հայերեն առաջին մասնագիտական բառարանները, ուր տերմիններ մշակվեցին բժշկական, ռազմական, երկաթուղային և այլ բնագավառների աշխատանքները հայերեն լեզվով վարելու համար: Մասնագիտական բառարաններին զուգընթաց հրատարակվեց «Ռուս-հայերեն նոր բառարան» երկհատորյակը, որը բավական թվով նոր բառեր կազմեց ու գրանցեց, որոնցից շատերը մտան հայ ժամանակակից դրական լեզվի ակտիվ բառապաշարի մեջ: Շարունակվեց մասնաճյուղային նոր բառարանների կազմումը՝ գրադարսնային, տնտեսագիտական, աշխարհագրական, ընդհանուր պոլիտեխնիկական և այլ բնույթի: Երևանում ավելի քան 70 անուն բառարան է հրատարակվել հիսնամյա շրջանում: Երևանում է հրատարակվել Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան» յոթհատորյակը, որը ոչ միայն հայ, այլև ընդհանուր բառարանագրության պատմության նշանակալից գործերից է: Արմատական բառարանը, որն այժմ չորս հատորի վերածած վերահրատարակում է Երևանի պետական համալսարանը (լույս է տեսել I հատորը՝ Ա-Դ), հիմնականում ստուգաբանական լինելով, միաժամանակ բաղմամբ ու բազմաբովանդակ բառարանների մի արժեքավոր ժողովածու է:

1942—1962 թթ. հրատարակվեց Հր. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարան» հինգհատորյակը և բառարաններ՝ բարբառային ուսումնասիրություններին կից:

Սովետահայ բառարանագրության նվաճումներից է Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան» չորս հատորյակը, որը պարունակում է «հայերեն լեզվով գրված ու խոսված բոլոր բառերը հայ մատենագրության

սկզբից մինչև մեր ժամանակները, այսինքն՝ բառամթերքները գրաբարի, ստորին գրաբարի, ռամկորենի, արգի գրական լեզվի և գավառական բարբառների՝ իրենց ոճաբանություններով, հին ու նոր ժամանակի փոխառյալ բառերը եվրոպական կամ արևելյան լեզուներից. ցույց տալով նրանց ծագումը, գրական լեզվի և բարբառների բառերի ամեն մի նշանակության համար համապատասխան օրինակներ, քերականական ցուցումներ և այլն»։ Բացատրական բառարանն ունի 120000 բառահոդված։

Տերմինաբանական բառարանների մեջ առանձնապես զնահատելի է Մ. Աբեղյանի «Ռազմական բառարանը», որը հարուստ է նոր բառակերտումներով։ Մ. Աբեղյանը ոչ միայն ռազմական, այլև բժշկական, երկաթուղային տրանսպորտի, գրաֆիկ ու կիրառական արվեստի գծով կազմել է հարյուրավոր նոր բառեր և կամ եղած հին բառերին հատկացրել է նոր իմաստներ, որպիսիք հարազատորեն մերվել են հայերեն գրական լեզվի բառապաշարին։

Սովետահայ բառարանագրության մեջ մեծ ձանաչում են գտել բժշկական բառարանները։ 1924 թ. լույս տեսավ Վ. Արծրունու «Ռուս-լատին-հայ բժշկագիտական բառարանը», որին հաջորդեցին Մ. Աբեղյանի, Լ. Հովհաննիսյանի և ուրիշների ու Գ. Գրոյի բառարանները։ Մ. Աբեղյանի, Վ. Արծրունու, Հր. Աճառյանի և ուրիշների բառարանները ուղեցույց են հանդիսացել հետագայում մասնագիտական-տերմինաբանական նոր բառարաններ կազմելու ժամանակ։

Սովետահայ բառարանագրությունը նոր զարկ ստացավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայում լեզվի ինստիտուտ կազմակերպելուց հետո։ Լեզվաբանական այլ աշխատանքներին զուգընթաց ինստիտուտը ձեռնամուխ եղավ կազմելու հայերեն բացատրական և երկլեզվյան բառարաններ, որոնցից առավել կարևորը պետք է համարել ռուս-հայերեն բառահատոր բառարանը։

Ուշադրության արժանի աշխատանք է ինստիտուտի կազմած ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը, որի I հատորը հրատարակվել է 1968 թ.։ Բացատրական նոր բառարանի զլխաբառերի նշանակությունները վկայված են հայ դասական և ժամանակակից գրականությունից բաղված օրինակներով։ Բառարանը հարուստ է դարձվածաբանությամբ։

Քննարկվող ժամանակաշրջանում հրատարակվել են Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բառարանը», ինչպես և Հ. Ամալյանի «Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ» երկհատորյակը։

«Հայաստան» հրատարակչությունը լույս է բնծայել ակադեմիկոս Արատ Ղարիբյանի «Ռուս-հայերեն բառարան» մեծածավալ աշխատությունը, որի մեջ լայնորեն օգտագործված է ժամանակակից բառարանագրության նվաճումներն արտահայտող ծավալուն գրականությունը։ Հեղինակը հիմնվել է ռուսական վերջին շրջանի լավագույն բառարանների՝ ԳԱ հրատարակած չորս-հատորյակի և ուսերենի 17 հատորանոց բացատրական բառարանի վրա։

Մեծ թիվ ու արժեք ունեն մատենակից բաղմամբիվ բառարանները, որոնց մեջ հիշատակության արժանի են Ա. Աբրահամյանի «Գրաբարի ձեռնարկի» գրաբար-աշխարհաբար և բարբառային ուսումնասիրությունների բարբառ-գրական հայերեն բառարանները։

Կարևոր աշխատանքներ է ձեռնարկել Հայկական ՍՍՀ ԳԱ ֆունդամենտալ գրադարանը, որոշելով հրատարակել հայ պատմիչների ու գրողների աշխա-

տությունների համաբարբառ բառարանները: 1970—1971 թթ. հրատարակվել են Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցի» համաբարբառները:

ՍՍՀՄ բառարանագրությունը հիսուն տարվա ընթացքում մեծ ուղի է անցել: Պատրաստվել են մասնագետների կադրեր, 4500 մասնագետ ու լեզվաբան զբաղվել են բառարանագրական աշխատանքներով, կազմելով շուրջ 4000 բառարան:

Ստեղծվել են մնայուն շատ գործեր, որոնք իրենց արժանի տեղն ունեն սովետական ժողովուրդների մշակույթի պատմության մեջ:

ЛЕКСИКОГРАФИЯ НАРОДОВ СССР ЗА ПЯТЬДЕСЯТ ЛЕТ

Доктор филол. наук Г. К. ГАСПАРЯН

(Резюме)

С первых же дней установления Советской власти Коммунистическая партия и Советское правительство проявили заботу о создании письменного языка для народов, не имеющих своей письменности, о ликвидации безграмотности, развитии национальной культуры.

За 50 лет существования Союза Советских Социалистических Республик издано множество разнообразных словарей, связанных почти со 150 языками: этимологические, орфографические, орфоэпические, толковые, двуязычные, многоязычные, синонимические, топонимические, фразеологические, терминологические и др. В статье перечислены основные словарные труды, созданные в союзных республиках, дана их оценка, отмечена важная роль русской лексикографии в создании двуязычных и толковых словарей.